Սարալանջ

Մակերես՝ 5.26կմ^2

Բնակչություն՝ 238

Գյուղ Ապարանի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 34 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Բաշ, Բաշգյուղ, Բաշգյուղ Նոր, Բաշքենդ, Բաշքենդ Փոքր անվանումները: Սարալանջ է վերանվանվել 1946 թ-ին: Անվանումը պայմանավորված է գյուղի տեղադիրքր հետ: Գյուղը տեղադրված է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արեւմտյան լանջերին: Գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Ունի տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղում եւ նրա շրջակայքում կան շատ հնություններ՝ 5-րդ դարի եկեղեցի, գյուղատեղի, գերեզմաններ, մահարձան եւ այլն:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը ներգաղթել է 1828-1829 թթ. Արեւմտյան Հայաստանի Էրզրումի, Մուշի, Կարսի մարզերից: 1831 թ-ին ունեցել է 139, 1897 թ-ին՝ 903, 1939 թ-ին՝ 1014, 1959 թ-ին՝ 999, 1979 թ-ին՝ 958, 1989 թ-ին՝ 1093 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 257 մարդ, որից 49% տղամարդիկ են, 51%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 22%, աշխատունակները՝ 62%, հետաշխատունակները՝ 16%: Գյուղն ունի 75 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց, բուժկետ:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Ցուրտ կլիմայի արդյունքում այստեղ տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 70%, որից արոտավայրերը կազմում են 125 հա, վարելահողերը՝ 10հա: Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: